**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.56**
**Ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԽԳՀԾՁԲ-06/26»**

ք.Երևան «03» ապրիլի 2026թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Վ. Չիլինգարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Չարխչյանի, որը գործում է «ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3 790 500 (երեք միլիոն յոթ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Կատարողը ԱԱՀ վճարող չի հանդիսանում:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում

կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի

զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**

________________ **Վ.Չիլինգարյան**
(ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի փ., 31 շ., բն. 146
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163001340393
ՀՎՀՀ 00508863
**Տնօրեն**

________________ **Գ. Զարխչյան**
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 03 » ապրիլի 2026 թ. կնքված
N2.56 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 2 | 80521200/10 | Ուսուցողական սեմինարներ՝ ՖՀ և ԳԾ ուսուցողական սեմինարներ **տե՛ս հավելված 1.1** | դրամ | 2 793 000 | 1 | Ծաղկաձորում կամ Աղվերանում կամ Դիլիջանում կամ Ջերմուկում (ծառայությունների մատուցման վայրը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ) | մինչև 2026թ. նոյեմբեր 30-ը: |
| 3 | 80521200/11 | Ուսուցողական սեմինարներ՝ ԳԿ, ԸԲ, ՏԲ և ՇՊԲ ուսուցողական սեմինար **տե՛ս հավելված 1.1** | դրամ | 199 500 | 1 | Ծաղկաձորում կամ Աղվերանում կամ Դիլիջանում կամ Ջերմուկում (ծառայությունների մատուցման վայրը կարող է փոփոխվել՝ կողմերի համաձայնությամբ) | Մինչև 2026թ. նոյեմբեր 30-ը: |
| 4 | 80521200/12 | Ուսուցողական սեմինարներ՝ ՄՌԿ և ՎԿԾ աշխատակիցների ուսուցողական սեմինար **տե՛ս հավելված 1.1** | դրամ | 798 000 | 1 | Ծաղկաձորում կամ Աղվերանում կամ Դիլիջանում կամ Ջերմուկում (ծառայությունների մատուցման վայրը կարող է փոփոխվել՝ կողմերի համաձայնությամբ) | Մինչև 2026թ. նոյեմբեր 30-ը: |

*** Պատվիրատուն նախապես՝ տասնօրյա ժամկետում, կտեղեկացնի Կատարողին սեմինարի իրականացման ճշգրիտ ժամանակահատվածի մասին:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**
________________ **Վ.Չիլինգարյան**
(ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի փ., 31 շ., բն. 146
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163001340393
ՀՎՀՀ 00508863
**Տնօրեն**
________________ **Գ. Զարխչյան**
(ստորագրություն) Կ.Տ

*Հավելված N 1.1*
*« 03 » ապրիլի 2026 թ. կնքված*
*N2.56պայմանագրի*

# ՁԵՌՔԲԵՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

**2-րդ չափաբաժին՝ Վերապատրաստման ծառայություններ՝ ՖՀ և ԳԾ ուսուցողական սեմինարներ (80521200/10)**

1. Գնման առարկա է հանդիսանում ՖՀ և ԳԾ աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերումը:
2. Տեխնիկական հատկանիշներ
Վերապատրաստման ծառայությունները նախատեսվում են 14 /տասնչորս/ անձի համար Ծաղկաձորում կամ Աղվերանում կամ Դիլիջանում կամ Ջերմուկում (ծառայությունների մատուցման վայրը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ)՝ համաժողովի ձևաչափով (այլ կազմակերպությունների աշխատակիցների մասնակցություն), որի մասնակիցների քանակը չպետք է պակաս լինի 50-ից:
Դասընթացի տևողությունը պետք է լինի 3 /երեք/ օր՝ ընդհանուր՝ 12 ուսումնական ժամ, սկիզբը՝ 1-ին օրվա ժամը 16:00-ին, ավարտը՝ 3-րդ օրվա ժամը 12:00-ին:
Դասընթացի ծրագիրը պետք է ներառի հարկային, աշխատանքային և գնումների օրենսդրությունների մասին թեմաներ, ինչպես նաև
ա) ճգնաժամային իրավիճակներում Ընկերության դրամական միջոցների և ֆինանսական հոսքերի կառավարում;
բ) ֆինանսական ռիսկերի կառավարում և կանխատեսում;
գ) ռազմավարական ծրագրերի /բիզնես-պլանի/ կազմման ժամանակ ընկերության ակտիվների և պարտավորությունների կանխատեսման մեթոդաբանություն թեմաները:
դ) Գնումների մասին ՀՀ օրենսդրության վերաբերյալ (այդ թվում էլեկտրոնային գնումների կազմակերպման) թեմաները՝ մասնավորապես.
- «Գնումների մասին» ՀՀ օրենք և «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշումներ և այլ իրավական ակտեր,
- Գնման գործընթացի պլանավորում և կազմակերպում,
- Գնում կատարելու ընթացակարգեր և մասնակցության կարգը,
- Էլեկտրոնային գնումների համակարգի և էլեկտրոնային աճուրդի (Armeps, PPCM, E-Auction) կիրառումը,
- Գնումների գործընթացի բողոքարկումը,
Դասընթացը պետք է վարեն հարկային, աշխատանքային և գնումների օրենսդրությունների ոլորտում դասախոսություններ անցկացնելու փորձ ունեցող անձիք:
Դասընթացի ավարտին բոլոր մասնակիցներին պետք է տրվեն դասընթացին մասնակցությունը հավաստող սերտիֆիկատներ:
Դասընթացի մասնակիցների համար Կատարողը պետք է ապահովի.
- բարձրակարգ կահավորված կոնֆերենց դահլիճ, որը պետք է ունենա դասընթացին օժանդակող համապատասխան ժամանակակից սարքավորումներ (պրոյեկտոր, գրատախտակ, օդորակիչ, խմելու ջուր և այլն):
- 3-անգամյա բարձրորակ սնունդ (շվեդական սեղան), 2 սուրճի ընդմիջումով,
- դեպի դասընթացի իրականացման վայր մեկնման և վերադարձի համար նախատեսված ավտոտրանսպորտ:
- գիշերակաց՝ դասընթացի անցկացման վայրում (4 կամ 5-աստղանի հյուրանոցում)՝ յուրաքանչյուր դասընթացի մասնակցի համար առանձին համարով՝ WI-FI անլար բարձրորակ ինտերնետ կապով և օդորակիչով:
3. Դասընթացի ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը՝ տպագիր և էլեկտրոնային, ինչպես

նաև գրենական պիտույքները և այլ պարագանները պետք է տրամադրվեն դասընթացն անցկացնող կազմակերպության կողմից:

**3-րդ չափաբաժին՝ Վերապատրաստման ծառայություններ՝ ԳԿ, ԸԲ, ՏԲ և ԾՊԲ ուսուցողական սեմինար (80521200/11)**

Գնման առարկա է հանդիսանում ԳԿ, ԸԲ, ՏԲ և ԾՊԲ աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերումը:
Դասընթացի ընթացքում պետք է ներկայացվի աշխատանքային օրենսդրությունում կատարված փոփոխությունների մասին օրենքը (թեման՝ փոփոխությունների ալգորիթմը և կառավարումը):
Վերապատրաստման ծառայությունները նախատեսվում են 1 /մեկ/ անձի համար Ծաղկաձորում կամ Աղվերանում կամ Դիլիջանում կամ Ջերմուկում (ծառայությունների մատուցման վայրը կարող է փոփոխվել՝ կողմերի համաձայնությամբ)՝ համաժողովի ձևաչափով (այլ կազմակերպությունների աշխատակիցների մասնակցություն), որի մասնակիցների քանակը չպետք է պակաս լինի 50-ից:
• Սեմինարի տևողությունը պետք է լինի 3 /երեք/ օր՝ ընդհանուր՝ 12 ուսումնական ժամ, սկիզբը՝ 1-ին օրվա ժամը 16:00-ին, ավարտը՝ 3-րդ օրվա ժամը 12:00-ին:
• Սեմինարի ավարտին մասնակցին պետք է տրվի սեմինարին մասնակցությունը հավաստող սերտիֆիկատ:
• Սեմինարի մասնակցի համար Կատարողը պետք է ապահովի.
- սեմինարի անցկացումը բարձրակարգ կահավորված կոնֆերենց դահլիճում, որը պետք է ունենա սեմինարներին օժանդակող համապատասխան ժամանակակից սարքավորումներ (պրոյեկտոր, գրատախտակ, օդորակիչ, խմելու ջուր և այլն):
- 3-անգամյա բարձրորակ սնունդ (շվեդական սեղան),
- 2 սուրճի ընդմիջում,
- դեպի դասընթացի իրականացման վայր մեկնման և վերադարձի համար նախատեսված ավտոտրանսպորտ,
-գիշերակաց դասընթացի անցկացման վայրում (4 կամ 5-աստղանի հյուրանոցում)՝ յուրաքանչյուր դասընթացի մասնակցի համար առանձին համարով՝ WI-FI անլար բարձրորակ/ արագ ինտերնետ կապով և օդորակիչով,
-դասընթացի ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը՝ տպագիր և էլեկտրոնային, ինչպես նաև գրենական պիտույքներ և այլ պարագաններ:

**4-րդ չափաբաժին՝ Վերապատրաստման ծառայություններ՝ ՄՌԿ և ՎԿԾ աշխատակիցների ուսուցողական սեմինար (80521200/12)**

1.Գնման առարկա է հանդիսանում ՄՌԿ և ՎԿԾ աշխատակիցների ուսուցման ծառայության ձեռքբերումը:
2. Տեխնիկական հատկանիշներ
Սեմինարի ընթացքում պետք է ներկայացվի աշխատանքային օրենսդրությունում կատարված փոփոխությունների մասին օրենքը (թեման՝ փոփոխությունների ալգորիթմը և կառավարումը):
Սեմինարի ավարտին բոլոր մասնակիցներին պետք է տրվեն սեմինարին մասնակցությունը հավաստող սերտիֆիկատներ:
3. Սեմինարը պետք է կազմակերպվի մինչև 4 անձի համար, համաժողովի ձևաչափով (այլ կազմակերպությունների աշխատակիցների մասնակցություն), որի մասնակիցների քանակը չպետք է պակաս լինի 50-ից, Ծաղկաձորում կամ Աղվերանում կամ Դիլիջանում կամ Ջերմուկում (ծառայությունների մատուցման վայրը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ)՝ տևողությունը 3 օր, ընդհանուր՝ 12 ուսումնական ժամ, սկիզբը՝ 1-ին օրվա ժամը 15:00-ին, ավարտը՝ 3-րդ օրվա ժամը 12:00-ին:
Սեմինարը պետք է վարի << <<Աշխատանքային օրենսդրությունում կատարված փոփոխությունների>> մշակման և կազմման գործընթացին մասնակցած անձը:

Սեմինարին մասնակցող անձանց համար Կատարողը պետք է ապահովի.
-բարձրակարգ կահավորված կոնֆերենց դահլիճ, որը պետք է ունենա սեմինարին օժանդակող համապատասխան ժամանակակից սարքավորումներ (պրոյեկտոր, գրատախտակ, օդորակիչ, խմելու ջուր և այլն),
- 3-անգամյա բարձրորակ սնունդ (շվեդական սեղան), սուրճի ընդմիջումներով,
-դեպի սեմինարի իրականացման վայր մեկնման և վերադարձի համար նախատեսված ավտոտրանսպորտ,
-գիշերակաց սեմինարի անցկացման վայրում (4 կամ 5-աստղանի հյուրանոցում)՝ յուրաքանչյուր սեմինարի մասնակցի համար առանձին համարով՝ WI-FI անլար բարձրորակ ինտերնետ կապով և օդորակիչով:
4. Սեմինարի ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը՝ տպագիր և էլեկտրոնային, ինչպես նաև գրենական պիտույքները և այլ պարագանները պետք է տրամադրվեն սեմինարն անցկացնող կազմակերպության կողմից:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**

________________ **Վ.Չիլինգարյան**
(ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի փ., 31 շ., բն. 146
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163001340393
ՀՎՀՀ 00508863
**Տնօրեն**

________________ **Գ. Չարխչյան**
(ստորագրություն) Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 03 » ապրիլի 2026 թ. կնքված*
*N 2.56 պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 80521200/10 | Ուսուցողական սեմինարներ՝՝ ՖՀ և ԳԾ ուսուցողական սեմինարներ | 2 793 000 | 2 793 000 | 2 793 000 | 2 793 000 | 2 793 000 | 2 793 000 | 2 793 000 | 2 793 000 | 2 793 000 | **2 793 000** |
| 3 | 80521200/11 | Ուսուցողական սեմինարներ՝ ԳԿ, ԸԲ, ՏԲ և ՇՊԲ ուսուցողական սեմինար | 199 500 | 199 500 | 199 500 | 199 500 | 199 500 | 199 500 | 199 500 | 199 500 | 199 500 | **199 500** |
| 4 | 80521200/12 | Ուսուցողական սեմինարներ՝ ՄՌԿ և ՎԿԾ աշխատակիցների ուսուցողական սեմինար | 798 000 | 798 000 | 798 000 | 798 000 | 798 000 | 798 000 | 798 000 | 798 000 | 798 000 | **798 000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**

_____________ **Վ.Չիլինգարյան**
(ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի փ., 31 շ., բն. 146
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163001340393
ՀՎՀՀ 00508863
**Տնօրեն**

_____________ **Գ. Զարխչյան**
(ստորագրություն) Կ.Տ

*Հավելված N 3*
*« 03 » ապրիլի 2026 թ. կնքված*
*N 2.56 պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հh ______________________ | հh ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 3.1*
*« 03 » ապրիլի 2026 թ. կնքված*
*N2.56 պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ________________ ազգանուն, անուն | ________________ ազգանուն, անուն |
| ________________ ստորագրություն | ________________ ստորագրություն |

*Հավելված N 4*
*« 03 » ապրիլի 2026 թ. կնքված*
*N2.56պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________-ի և ____________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_______________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.